



ԱՌԻՂՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հարցումը պետք է ուղարկվի aaaa@aaaa.am էլեկտրոնային հասցեին՝ **Subject** տողում կատարելով հետևյալ գրառումը. Առողիտորական գործունեության հանձնաժողովին

| | |
|-----------------------|---|
| Անուն և պաշտոն. | Գնել Խաչատրյան |
| Կազմակերպություն. | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ |
| Կոնտակտային տվյալներ. | +37433309430 |
| Ամսաթիվ. | 16.08.2021 |
| Հարցում. | <p>Հղումներ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի</p> <p>Համաձայն 22.2 և 22.4-ի խոշոր, միջին և փոքր խմբերը պարտավոր են պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Ըստ 27.1-ի խոշոր, միջին ու փոքր կազմակերպությունները և խմբերը, պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել:</p> <p>Ըստ 27.4.-ի առողիտի ենթակա կազմակերպությունները և խմբերը (խմբի մայր կազմակերպությունը) պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել միայն առողիտի ենթարկվելուց հետո:</p> <p>Հարց՝ Արդյո՞ք ա/ խմբի մեջ գտնվող բոլոր խոշոր, միջին ու փոքր կազմակերպությունները պարտավոր են հրապարակել, այդ թվում առողիտի ենթարկվելու հետո, առանձին ֆինանսական հաշվետվություններ՝ ըստ ՀՀՄՍ 27-ի, բ/ միայն խմբի համախմբված հաշվետվություն, գ/ ն՝ առանձին և՛ համախմբված; դ/ մայր կազմակերպությունները՝ համախմբված, իսկ մյուսները՝ առանձին; թե՞ ե/ ամենավերևի մայրը՝ համախմբված, իսկ մնացած մայրերը և դուստրերը՝ առանձին:</p> |

«Չ այ աս տանի առ և դիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության առողիտորական գործունեության հանձնաժողովի կողմից առ և դիտորական ստանդարտների, առ և դիտորական գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների և գործնական բնույթի կրող հարցերի առ և չ ու թյամբ մշակված մեկնաբանություններն ու նեն խորհրդակցական բնույթի, չ են հանդիսանում միայն կամ դրամաբանների պատժական դիրքորոշումը: Չ անձնաժողովը որևէ պառասխանադրություն և չի կրում մեզ ված մեկնաբանություններում արտահայտված դիրքորոշումների և կարծիքների համար:



ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/3, 6-րդ հարկ, /ՀԱՊ գործունեության գրասենյակ/
Հեռ.: 010 24-91-78; 077 24-91-78; 010 23-71-02; E-mail: aaaa@aaaa.am

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

| | |
|--|---|
| <p>Լուծման Ձեր տարբերակը՝ ներկայացված հարցի վերաբերյալ և/կամ հղումը համապատասխան ստանդարտներին</p> | <p>Կարծում եմ, որ Խմբի համախմբված հաշվետվությունը միակ պահանջվող հաշվետվությունն է ըստ Օրենքի նշված կետերի:</p> <p>Նկատենք, որ ըստ ՖՀՄՍ 10. 4-ի Մայր կազմակերպությունը պետք է ներկայացնի համախմբված ֆինանսական հաշվետվություններ:</p> |
|--|---|

«Յայ աս տանի աու դի տոր ների և փորձ ագետ հաշվապահ ների պալ աա» հասարակական կազմակերպություն աու դիտորական գործունեության հանձնաժողովի կողմից աու դիտորական ստանդարտների, աու դիտորական գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների և գործնական բնույթի կրող հարցերի առնչությամբ մշակված մեկնաբանություններն ու նենն խորհրդատվական բնույթի, չեն հանդիսանում միայն աու կամ դրամադրման ների պալատական դիրքորոշումը: Յանձնաժողովը որևէ պառտախանաղություն և չի կրում մշակված մեկնաբանություններում արտահայտված դիրքորոշումների և կարծիքների համար:



ԱՌՈՂՏՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի արձագանք

ա/ Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի պարտադիր աուդիտի ենթակա են հետևյալ կազմակերպությունների և խմբերի ֆինանսական հաշվետվությունները.

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և **խոշոր կազմակերպությունները.**

2) միջին կազմակերպությունները.

3) խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է, և խոշոր խմբերը.

4) միջին խմբերը:

Ինչպես երևում է վերը շարադրածից աուդիտի պարտադիր պահանջ չկա փոքր կազմակերպությունների համար, ինչպես նաև չկա պարտադիր աուդիտի չիրականացման վերաբերյալ սահմանված առանձնահատկություն այն խոշոր կամ միջին կազմակերպությունների համար, որոնք հանդիսանում են խմբի ընկերություններ:

Հետևաբար հանձնաժողովը կարծում է, որ խմբի մեջ գտնվող բոլոր խոշոր, միջին կազմակերպությունները պարտավոր են հրապարակել, այդ թվում աուդիտի ենթարկվելուց հետո, առանձին ֆինանսական հաշվետվություններ:

բ/ գ/ դ/

Հանձնաժողովը կարծում է, որ եթե խոշոր կամ միջին խմբի մայր կազմակերպությունն ու դուստր կազմակերպությունն առանձին վերցրած Օրենքի համաձայն հանդիսանում են խոշոր, միջին կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություններ, ապա պարտադիր աուդիտի և հրապարակման են ենթակա ինչպես խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները, այնպես էլ մայր կազմակերպության և դուստր կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվությունները:

Ցանկանում ենք նշել նաև, որ մեր ունեցած տեղեկությունների համաձայն բարձրացված հարցերի մասով ՀՀ Ֆինանսների նախարարությունը նույնպես հայտնել է իր դիրքորոշումը, որը համընկնում է հանձնաժողովի դիրքորոշման հետ:

«Յ այ աս տանի աու դի տր և փորձ ագետ հաշ վապահ ների պա առ» հասարակական կազմակերպության աու դի տր ակա գործու նե ու թյ ան վեր աբ երյ ալ օրենսդրական կարգավորումների և գործնական բնույթի կրող հարցերի առնչ ու թյ ամբ մշակված մեկնաբանություններն ու նեն խորհրդակցական բնույթի չեն հանդիսանում մ Պա առի կամ դրամադրմանների պառտական դիրքորոշումը: Գ անձ նաժողովը որևէ պառտախան աուդիտ թյ ու ն չի կրում մ նշված մեկնաբանություններում արտահայտված դիրքորոշումների և կարծիքների համար: